ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն **04.08.2015**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Ծրագրի անվանումը: Շինարարության տեխնիկական հսկողություն

Վարկի համարը: P148836

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ TS-01

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագրի ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետությունը դիմել է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (ՎԶՄԲ) վարկ ստանալու նպատակով և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների՝ շինարարության տեխնիկական վերահսկողության համար:

Առաջադրանքի նպատակը.

Խորհրդատուն պետք է՝

1. Մասնակցի շենքերի և շինությունների առանցքների նշահարմանը, շինարարության ընթացքում ստուգի և չափագրի գեոդեզիական նիշերը:
2. Պարբերաբար ստուգի բոլոր կատարված շինմոնտաժային աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին:
3. Ստուգի շինարարությունում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների և վերլուծությունների արդյունքների գոյությունը և, նախագծի ու արտադրանքի որակի պահանջներին անհամապատասխանության դեպքում, արգելի դրանց օգտագործումը, այն ձևակերպելով համապատասխան ակտերով և ներկայացնի (ՀՏԶՀ):
4. Կապալառուի կողմից վարվող շինարարության ընդհանուր մատյանում նշի նկատողությունները և դիտողությունները հայտնաբերված թերությունները և դրանց վերացման մասին համապատասխան գրառումները:
5. Մասնակցի պետական քաղաքաշինական հսկողության և այլ լիազորված մարմինների կողմից անցկացվող շինարարության որակի ստուգումներին և հետևի հայտնաբերված թերությունների ժամանակին վերացմանը:

6. Անավարտ աշխատանքների և զգալի թերությունների հայտնաբերման դեպքում կազմի նրանց ցանկը, սահմանի վերացման ժամկետները և անհապաղ տեղյակ պահի ՀՏՋՀ-ին և ԻԿ-ին:
7. Մասնակցի սառեցված (կոնսերվացված) կամ դադարեցված շինարարական օբյեկտների ընդունմանը, ինչպես նաև ակտով նրանց հանձնմանը ԻԿ-ին՝ նշելով օբյեկտների տեխնիկական վիճակը:
8. Մասնակցի ինժեներական կոմունիկացիաների և կառույցների, խողովակաշարերի, էլեկտրասարքավորումների փորձարկումներին և ստորագրի համապատասխան փորձարկման ակտեր:
9. Վարի շինարարության ընդհանուր մատյան, կանոնավոր կերպով գրանցի օրական կատարված աշխատանքների ընթացքը, շինհրապարակ ներմուծվող կոնստրուկցիաների, իրերի, նյութերի քանակը և որակը:
10. Իրականացնի ԻԿ-ի և կապալառուի հետ համատեղ կատարված աշխատանքների տեսակների ընդունում՝ ծածկվող աշխատանքների ընդունման ակտերի միջոցով:
11. Իրականացնող կոմիտեի, կապալառու կազմակերպության ներկայացուցիչների հետ համատեղ կազմի և վավերացնի վճարման ներկայացվող կատարողական ակտերը: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունը պատասխանատու է կատարողական ակտում բերված աշխատանքների ծավալների իսկության և որակի համար:
12. Ստորագրի շինարարության ավարտական ակտերը:
13. ՀՏՋՀ ներկայացնի ամսեկան հաշվետվություններ:
14. Իրականացնի ամսեկան բնապահպանական մոնիտորինգ և ապահովի դրանց համապատասխանությունը ՀԲ բնապահպանական կառավարման պլաններին:
15. Թերությունների բացահայտման դեպքում որոնք սպառնում են շենքերի կայունությանն և հուսալիությանը և չեն համապատասխանում ծրագրի բնապահպանական և սոցիալական պահանջներին, անհապաղ տեղեկացնի կապալառուին և պատվիրատուին:
16. Խորհրդատուն պետք է երաշխավորի, որ շինարարության ընթացքում ցանկացած չպլանավորված հողի օգտագործում պետք է ներկայացվի պատվիրատուին:

Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ, որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար:

Ընտրության չափանիշներն են.

- Տեխհսկողութան կազմակերպության ընդհանուր փորձառությունը
- Նմանատիպ օբյեկտների վերահսկողութան փորձը

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ “Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎՋՄԲ-ի փոխառությունների և ՄՋԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011” (“Խորհրդատուների

Ուղեցույցներ” (Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011, revised July 2014)), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի (Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers January 2011, revised July 2014) 3.7 կետում սահմանված “Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն” ընթացակարգին համաձայն:

Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ ՀՏԶՀ գրասենյակից Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Գնումների վարչություն, աշխատանքային օրերին ժ. 10:00-ից մինչև ժ.17:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով , ոչ ուշ քան 2015 թ. օգոստոսի 18-ը, ժամը 17:00-ը:

Հայասանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ

Գնումների վարչություն

Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ

Էլ-փոստ՝ asif@armeniasif.am

Հեռ: (+37410) 24 71 42